Safe.am

# ԱՊԱՀՈՎ ՀԱՄԱՑԱՆՑ

## ԲԱՑ ԴԱՍ

## Միասին դեպի ավելի լավ համացանց

**Դասի նպատակը** ՝ համակարգված գիտելիքների տրամադրումն է համացանցի ապահով եւ արդյունավետ օգտագործման մասին:

**Դասի Խնդիրները՝**

*Կրթական*

Համացանցում անհրաժեշտ տեղեկատվության արդյունավետ որոնման կարողությունների զարգացում

Ստացված գիտելիքները նախագծային աշխատանքներում կիրառելու հմտությունների զարգացում

Ստացված գիտելիքների վերլուծման և համակարգման ընդունակությունների զարգացում

*Դաստիարակչական*

Հետաքրքրության ձևավորում ապօրինի, վնասակար եւ ոչ պատշաճ բովանդակության դեմ պայքարի միջոցների և գործիքների մասին

Համոզել Վիրտուալ ցանցերում առաջացող հնարավոր ռիսկերից համատեղ պաշտպանվելու  նպատակահարմարության մեջ:

**Անհրաժեշտ սարքավորում ներ.** Համացանցին միացված համակարգիչ, պրոեկտոր, էկրան

## Ցուցումներ

Դասարանը բաժանեք 6 թիմերի և հանձնանարեք հետևյալ թեմաները `

1. Համացանցային վիճակագրություն
2. Գրադարաններ, երաժշտություն և պատկերներ
3. Բլոգ, սոցիալական ցանցեր և Վեբ 2
4. Շարժական (բջջային) տեխնոլոգիաներ
5. Ապահով Համացանց (անվտանգություն, հետապնդումներ և ոտնձգություններ, մասնավոր կյանքի գաղտնիություն)
6. Խաղեր, ապահով համացանցին նվիրված eSafetyKit խաղը

## Դասի պլանը

1. Նախապատրաստական մաս , դասի նպատակի ներկայացում 3 րոպե
2. Թեմաների ներկայացում 5*3 - 15 րոպե (առանց ապահով համացանց թեմայի)
3. Ձեռքսեղման րոպե 1+1 րոպե
4. Ապահով Համացանց թեմա 7 րոպե
5. Քննարկումներ 6*2 - 12 րոպե
6. Թեստավորում Ապահով համացանց խաղի օգնությամբ, հանձնարարության կատարում 5 րոպե
7. Դասի ամփոփում և http://safe.am կայքում տեղադրված տեսահոլովակի ցուցադրում 3 րոպե

## Գրատախտակի ձևավորումը

Թվային և առօրյա կյանքի կանոնները նման են եւ դրանց պահպանելը միայն կօգնի ավելի արդյունավետ օգտվել համացանցից

Միասին և ավելի ապահով բացահայտենք թվային աշխարհը: Կառուցենք կամուրջներ սերունդների միջև

## Դասի ընթացքը

1. **Նախապատրաստական մաս, դասի նպատակը 3 րոպե**

Տրամադրելով անսահման եւ աննախադեպ հնարավորություններ, համացանցը պարունակում է նաեւ բազմաթիվ վտանգներ՝ հատկապես երեխաների համար:

**Համացանցը** և **Համաշխարհային Ոստայն** հասկացությունները շատ հաճախ նույնացվում են, սակայն դրանք հոմանիշներ չեն: *Համացանցը* միմյանց հետ կապակցված համակարգչային ցանցերի ամբողջություն է, իսկ *Համաշխարհային Ոստայնը* իրենից ներկայացնում է փողկապակցված փաստաթղթերի ամբողջություն, որոնք միմյանց հետ կապված են գերհղումներով և URL-ներով: *Տեսահոլովակի ցուցադրում:*

2. **Համացանցի հնարավորությունների պարզաբանում 5*3 - 15 րոպե**

- Համացանցային վիճակագրություն

Աշխարհի բնակչության ավելի քան 40 տոկոսը՝ ավելի քան 3.5 մլրդ մարդ միացել է համացանցին: Հայաստանի բնակչության արդեն կեսից ավելին առցանց է, մինչդեռ համացանցի օգտագործման տրաֆիկի մեծ մասը մնում է ոչ պատշաճ բովանդակություն:

- Գրադարաններ, երաժշտություն և պատկերներ, էլեկտրոնային փոստ, զրուցարաններ.
  http://safe.am/ilh/ilh9.html Գրադարաններ
  http://safe.am/ilh/ilh10.html Երաժշտություն և պատկերներ
  http://safe.am/ilh/ilh5.html Էլեկտրոնային փոստ
  http://safe.am/ilh/ilh7.html Զրուցարաններ

- Բլոգ, Սոցիալական ցանցեր և Վեբ 2
  http://safe.am/ilh/ilh21.html Բլոգ
  http://safe.am/ilh/ilh22.html Սոցիալական ցանցեր
  http://safe.am/ilh/ilh23.html Վեբ 2

- Շարժական (բջջային) տեխնոլոգիաներ
  http://safe.am/ilh/ilh20.html

- Խաղեր. Խաղեր, ապահով համացանցին նվիրված eSafetyKit խաղը
  http://safe.am/ilh/ilh12.html

3. **Ձեռքսեղման բոպե 1 բոպե + 1 բոպե**

Սովորողներին առաջարկում եք 10 վայրկանի ընթացքում հնարավորինս շատ դասընկերների ձեռքով ողջունել:

Քննարկում-քանի հոգու ողջունեցիք, զգացիք անհարմարո2ություն, իսկ ինչով էր դա պայմանավորված:

Նույն է նաեւ համացանցում, որտեղ շփվելիս մենք հաճախ անծանոթներին ավելացնում մեր էջում և շփվում նրանց հետ: Իսկ ինչ գիտենք մենք նրամց մասին …

Ինչպես դարձնել մեր աշխատանքը համացանցում անվտանգ և ապահով:

## 4. Ապահով Համացանց. համացանցի անվտանգություն, մասնավոր կյանքի գաղտնիություն 7 րոպե

Տանը, աշխատավայրում կամ դպրոցում մեր գնալով խորացող կախվածությունը տեխլոգիաներից պահանջում է համացանցային անվտանգության առավել լայն կիրառում: Անհատները պաշտպանության առաջին գիծն են առցանց ռիսկերից: **Կանգնե՛ք, Մտածե՛ք, Միացե՛ք™** տեղեկատվական արշավի նպատակն է հանրային իրազեկման միջոցով ուղղորդել հասարակությանը դեպի առավել անվտանգ Համացանցի օգտագործում՝ կիրառելով Համացանցի ապահով օգտագործման հմտությունները: **Կանգնե՛ք, Մտածե՛ք, Միացե՛ք™** տեղեկատվական արշավի գլխավոր նպատակն է օգնել քաղաքացիներին հասկանալ ոչ միայն Համացանցից օգտվելու ռիսկերը, այլև անվտանգ առցանց վարքագիծ դրսևորելու կարևորությունը:

- Խորհուրդներ ապահով և անվտանգ լինելու հարցում
  http://safe.am/stopthinkconnect/stc_website_tip_sheet_arm.pdf

- Խորհուրդներ ծնողներին առցանց խաղերի հարցում
  http://safe.am/stopthinkconnect/stc_gaming_tips_for_parents_arm.pdf

- Խորհուրդներ երեխաներին առացանց խաղերի հարցում_
  http://safe.am/stopthinkconnect/stc_gaming_tips_for_kids_arm.pdf

5. **Քննարկումներ հետևյալ հարցերի շուրջ 10 րոպե**

http://www.safe.am/esafe/esafearm/faq.html հաճախ տրվող հարցեր

- Որ տարիքից կարելի է համացանց մտնել:
- Կարող ենք արդյոք ունենալ անձնական էլեկտրոնային հասցեն, ստեղծել բլոգներ կամ գրանցվել սոցիալական ցանցերում
- Ինչ տնային կանոններ պետք է սահմանել համացանցի օգտագործման համար:
- Որ տարիքից օգտագործել Ակնթարթային հաղորդակցման ծրագրերը:
- Կարող եք արդյոք մեծահասակները կարդալ մեր հաղորդագրությունները:
- Արդյոք վեբ-խցիկները հուսալի են:
- Ինչ է համացանցային կախվածությունը:
- Ինչ պետք է իմանալ համակարգչային վիրուսների մասին:
- Ինչ պետք է անել, երբ անհանգստացնում են համացանցում:
- Արդյոք օգտակար են ֆիլտրող ծրագրերը:

6. **Թեստավորում «Ապահով համացանց» շտեմարանի օգնությամբ** http://safe.am/esafetykit/teachers/index.html

7. **Տնային առաջադրանք՝** http://www.safe.am/esafetykit/parents/index.html

8. **Դասի ամփոփում և** http://safe.am **կայքում տեղադրված տեսահոլովակի ցուցադրում՝** https://www.youtube.com/user/saferinternetarmenia/videos

Քանի որ համացանցը մարդկանց հաղորդակցման և շփման այնպիսի նոր միջավայր է, որտեղ շատ վաղուց հայտնի կանոններն ու  օրինաչափությունները  բոլորովին նոր ձևակերպումներ են ստանում ես նույպես մի քանի խորհուրդներ ունեմ:

Հիշում եք **Հովհաննես Թումանյանի «Կացին ախպեր» հեքիաթը՝**
http://hy.wikisource.org/wiki/Կացին_ախպեր

Այսօրվա համացանցը կարգավորվող միջավայր է և այնտեղ իրենց լավ են զգում միայն այն մարդիկ ովքեր կարողանում են ճիշտ օգտագործել կացինը … գործիքներն ու միջոցները:

**Դուռդ փակ պահիր և հարևանիդ զող մի հանի,  այսինքն՝**

Հնարավորինս փակ պահեք ձեր անձնական տվյալները, եթե որոշել եք դրանք հրապարակել:

Օգտագործեք ծածկագրեր, որպեսզի միայն ձեր ընկերները կարողանան կարդալ: Ձեր ծածկագրերը պահեք ապահով:

**Յոթ անգամ չափիր և մեկ անգամ կտրի,  հետևաբար՝**

Մեկնաբանություն գրելուց առաջ 2 անգամ մտածեք, քանի որ երբ այն հայտնվեց Համացանցում, այն կարող է հավերժ մնալ այնտեղ:

Մի վստահեք այն ամենին ինչ ասում են Ձեզ այլ մարդիկ, նրանք կարող են կեղծ լուսանկարներ օգտագործել, կամ ստել:

**Փորձված թանը անփորձ մածունից լավ է, այսինքն՝**

Ուշադիր եղեք թե ում հետ եք շփվում, հատկապես երբ ձեր ընկերների ցանկում ընդգրկում եք նոր մարդու:

Եվ ուշադիր եղեք անծանոթ մարդկանց նկատմամբ, ովքեր Ձեզ հրավիրում են միանալ իրենց համայնքին:

Պարզեք թե ինչ են ուրիշները տեղադրում ցանցում Ձեր մասին եւ զգուշացրեք նրանց եթե համաձայն չեք:

## Օգտակար հղումներ

http://safe.am

http://safe.am/book/Handbook_for_Young_Arm.pdf

http://safe.am/stopthinkconnect/stc.html

http://safe.am/esafetykit/start.html

http://safe.am/esafetykit/downloads/kidsFull.pdf

http://safe.am/esafetykit/downloads/parentsFull.pdf

http://safe.am/book/Digital_World_Survival_ARM.pdf

http://safe.am/ilh/ilh.html

http://safe.am/book/Handbook_for_Young_Arm.pdf

http://safe.am/book/Handbook_teachers_lesson_plans.pdf

https://www.youtube.com/user/saferinternetarmenia/videos

http://safe.am/ar/radio.html

http://safe.am/ar/video.html

http://safe.am/ar/lesson.html